կասսաներ, կարծում ենք շատ պարզ է—գրեթէ բոլորն էլ միանգամից կփակուեն, հիշա այնպէս, ինչպէս որ հոկտեմբերի 17-ի մանիֆէստից յետոյ՝ հայ լրագիրները։

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Անցեալ տարուայ վերջերին Վանքի ա. եկեղեցում կայացաւ նոր երեցփոխանի և 3 հոգաբարձուների ընտրութիւն։ Ժողովում Վանքի 1804 ընտրողներից ներկայ էին 29 հոգի, որոնք և կատարեցին ընտրութիւնները։

Այդ ժողովի մասին մի լուր կար տպուած «Վասակ» լրագրում, ուր, 'ի միջի այլոց ասուած էր, թէ ես ցանկանում էի ընտրուել հոգաբարձու, բայց հէնց որ տեսայ միածայն չեն ընտրում, այլ պիտի ենթարկուիմ քուէարկութեան՝ հրաժարուեցի։

Այս լուրը զուրկ է ամենայն ճշմարտութիւնից. իրողութիւնն այս է, որ ժողովականներից մէկը և յատկապէս պ. Օքրոյեանը առաջարկեց, որ հոգաբարձուներից մէկը ցանկալի էր քահանաներից ընտրել և մատնանիշ արին ինձ վրայ։ Ես դորան պատասխանեցի, թէ «բացէ ի բաց հրաժարւում եմ որևէ պաշտօնի քուէարկուելուց» և իմ կողմից առաջարկեցի ընտրել մեր աւագերէցին։

Ո՞րտեղից «Վասակի» պ. լրատուն հնարեց վերոյիշեալ անհեթեթ սուտը՝ չգիտեմ. բայց ես կարծում եմ աւելի լաւ կանէր պարոնը, եթէ դորա փոխարէն պարզէր հասարակութեան, թէ ինչպէս 1804 քուէ ունեցող մի ծխից՝ 29 հոգով կայացած ժողովում ինն ձայն ստացողներից մէկը, դիցուք հէնց պ. Տիգրան Յովհաննիսեանը ընտրուած համարուեց հոգաբարձութեան պաշտօնի։

Վանքի ա. եկ. ծխական Գիւտ ա. ք. Աղանեանց

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱԳՈՒ. Ա. Տ.-Գ.—Ձեր բանաստեղծութիւնը կտպուի միւս համարում։

ՔԻՇՆԵՒ. Կրպէ.—Ձեր յօդուածը կտպուի. մենք մեղաւոր չենք, որ ուշանում է։ Հայ մամուլի վիճակն է այդպէս։

Ն.-ԲԱՑԱՁԻՏ. Խանդաղէ.—Ձեր վէպի մասին որոշում կանէ խմբագրութիւնս շատ շուտով. և այդ մասին նամակ կստանաք։

ԿԱՐՍ. Ա.-Բ. Ց.—Ստացել ենք «Այր Աստուծոյ Միշան» և «Քրիստոս յարեաւ». կկարդանք և խմբագրութեան որոշումը կայանենք։

ՂԱԶՎԻՆ. Պ. Ա. Ց.—Ստացանք ձեր բանաստեղծութիւնները. կարդացէք վերևի պատասխանը։

ՄՈՍԿՈՒԱ.—Լաղարեան Եեմարանին Արևելեան լեզուաց.—Ստացանք Ձեր ուղարկած յայտարարութիւններից մի կապոց, որոնք վերաբերում են Էմինեան ազգագրական ժողովածուին։ Հետաքրքիր է իմանալ, ինչ նպատակով է ուղարկուած մեզ յայտարարութիւնների ծրարը. եթէ տարածելու համար՝ հապա ինչպէս դպրոցիդ վարչութիւնը խարութիւն է դնում հայ թերթերի խմբագրութիւնների մէջ և մեր թերթին երբէք ոչ մի օրինակ իւր հրատարակութիւններից չէ ուղարկել ծանօթանալու այն հրատարակութիւններին, որոնց յայտարարութիւնները ուղարկում է մեզ՝ ծրիաբար տարածելու։

ԲԱԳՈՒ.—Լևոնեանին. ստացանք. կկարդանք և կպատասխանենք։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Օրացոյց ս. Էջմիածնի 1908 թ. Մայր Աթոռից.

Албертъ Вандаль. Армяне и турецкія реформы, пер. съ фр. М. Алавердянцъ, Спб., 1908.

Վարկստու ընկ. կանոնագրութիւն, փոխ. Գ. Ենդիրարեան, Բաքու 1907 թ. գ. 30 կ.

Ն. Վ. Մելիք-Թանդեան, Հայոց եկեղ. իրաւունքը ը. դիրք. կազմակերպութիւն և կառավարութիւն. Շուշի, 1907 50 կ.

Բ. Իշխանեան. Թիւրքիայի ապագան, Թիֆլիս, 1907 10 կ.

Իսրայել սարկ. Քնարիկ, ժողովրդ. ծայն. երգեր, տեար ա. Վաղարշ. 1907 15 կ.

Ա. Հայկունի, ժողովրդական առակներ, Վաղ. 1907 30 կ.

Կրթութեան բարեկամներուն, Լօզան, 1907.

Մ. Զմշկեան, տարեցոյց 1908 Թիֆլիս, 30 կ.

Տեղեկագիր և հաշիւ Բաքուայ Հայոց Կուլտուր. միութեան 1906—7. Բաքու 1907.

Լևոն Վարդ. Հին Նախիջևանի նպաստամատոյց մասնաժողովի հաշիւները, Վաղ. 1907

Ներսէս ք. Տէր-Կարապետեան. Ցարութիւն մարդկան, ը. տպ. Թիֆլիս, 1908 10 կ.